




ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏՄԱՍԲԴ
ԳԻՏԱԿԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)




ԵՐԵՎԱՆԻ
ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԲԱՆ



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԳԵՆԱՅԻՆ
ԿՈՄԻՏԵԱՑ» ՓԲԸ



ԳԻՏԱԿԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՎՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(2), 2019

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

ԱԵԳՄՄ – UYSSA – ОМУСА
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2019

Հրատարակության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Рекомендовано к публикации решением ученого совета Ереванского государственного университета

Recommended for Publication by the Yerevan State University Academic Council Decision

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՄԻՄՈՆՅԱՆ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

- Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
- Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
- Զուլիետա ԳՅՈՒԼԱՍԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
- Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
- Մարել ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
- Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
- Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Չամբուրգ, Գերմանիա)
- Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Սուշել ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Վշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
- Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Կարին ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
- Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
- Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
- Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
- Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(2), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 480 էջ:
Scientific Artsakh, № 1(2), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 480 pages.
Научный Арцах, № 1(2), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 480 страниц.

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 1-ին համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Շվեյցարիան և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող 50 անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

In the first issue of the «Scientific Artsakh» journal in 2019 the works on topical issues of social sciences by 50 well-known and young scientists representing Republic of Armenia, Republic of Artsakh, Republic of Belarus, the Islamic Republic of Iran, Poland, Switzerland and the Russian Federation are published.

В первом номере за 2019-ый год журнала «Научный Арцах» опубликованы работы по актуальным проблемам общественных наук, авторами которых являются 50 известные и молодые ученые, представляющие Республику Армения, Республику Арцах, Республику Беларусь, Исламскую Республику Иран, Польшу, Швейцарию и Российскую Федерацию.

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julietta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент
Мареk ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Гарик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Մարիամ Առաքելյան. Ուսանողների մեդիակոմպետենտության գնահատման խնդիրը անգլերենի իրավագիտական կողմնորոշման դասընթացում.....270
Mariam Arakelyan. The Problem of Students' Media Competence Assessment in the Legal English COURSES

Мариам Аракелян. Проблема оценки медиа-компетентности студентов на курсах юридического английского языка

Մանսուր Լարուի. Միջանձնային հարաբերությունների կառավարման արդյունավետությունն՝ ըստ սոցիոլոգիական հարցումների արդյունքների.....278
Mansour Larouei. The Effective Management of Interpersonal Relationships Based on the Results of Sociological Research

Мансур Ларуи. Эффективность управления межличностными отношениями согласно результатам социологических исследований

Համիդռեզա Կամիար. Մեծահասակների կրթության ռազմավարությունները.....285
Hamidreza Kamiar. Adult Education Strategies

Гамидреза Камиар. Стратегии образования взрослых

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
LINGUISTICS, LITERATURE STUDY
ЛИНГВИСТИКА, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Հռիփսիմե Չաքարյան. Զաղաքի տարածական մոտիվը Հենրիկ Էդոյանի պոեզիայում.....292

Hripsime Zakaryan. The City's Spatial Motif in Henrik Edoyan's Poetry

Рипсима Закарян. Пространственный мотив города в поэзии Генриха Эдоюна

Մերի Հովհաննիսյան. Հոմանիշների ոճական առանձնահատկությունները Վահան Տերյանի չափածոյում.....299

Meri Hovhannisyan. The Stylistic Peculiarities of Synonyms in Vahan Teryan's Speech Art

Мери Ованнисян. Стилистические особенности синонимов в поэзии Ваана Теряна

Սվետլանա Մանուչարյան. Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքների բայական համակարգերի համեմատական քննություն.....307

Svetlana Manucharyan. A Comparative Examination of the Verb Systems Of The Speeches (Dialects) of Kapan-Goris Areas

Светлана Манучарян. Сравнительный анализ категорий глагола в говорах региона Капан-Горис

Թեհմինա Մարության. Յեղասպանության արտացոլումը Սիմոն Սիմոնյանի ստեղծագործություններում.....322

Tehmina Marutyanyan. Some Issues on the Genocide in the Works by Simon Simonyan

Теймина Марутян. Отражение Геноцида армян в произведениях Симона Симоняна

ՅԵՐԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍՅԵՐԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

ՀՏԴ.82.3:811.19

ԹԵԶՄԻՆԱ ՍԱՐՈՒԹՅԱՆ

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ, «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագրի տեղակալ, Գորիսի պետական համալսարանի գիտական քարտուղար, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, ք. Գորիս, Հայաստանի Հանրապետություն tmarutyan@mail.ru

Լիբանանահայ նշանավոր արձակագիր Սիմոն Սիմոնյանի մասին հայ գրականագիտության մեջ չկա որևէ առանձին ուսումնասիրություն: Զննարկան առարկա չի դարձել նաև Եղեռնի անդրադարձը գրողի երկերում: Սույն հոդվածի արդիականությունը Ս.Սիմոնյանի ստեղծագործություններում ցեղասպանության թեմայի համակարգված ներկայացումն է ու արժևորումը:

Մեր նպատակն է հայ եղեռնապատումի գեղարվեստական համատեքստում հիմնական գծերով, թեմատիկ առանձնացումներով, աշխարհայացքային գլխավոր առանձնահատկություններով ցույց տալ Սիմոն Սիմոնյանի ստեղծագործության դերն ու նշանակությունը, գրապատմական ու արդիական արժեքը: Հիմնականում պատմվածքի ու վիպակի հղացքում գրողը խտացրել է հայրենիքից հեռու գոյատևելու դատապարտված հայության (գլխավորապես՝ սասնահայության) բեկորների աստանդական ճակատագիրը, այդ ճակատագիրը կանխորոշած ազգային ողբերգությունը, որը կոնկրետ հոգեբանական վիճակներ է ձևավորում՝ հայրենակարոտի սրված զգացողությամբ ու կորստի ցավով և, վերջապես, իբրև այդ ողբերգության դառնագույն հետևանք, սփյուռքյան սպիտակ ջարդի եղբերակությունը, որ լայնորեն տողանցում է Սիմոնյանի գեղարվեստական արձակը:

Հոդվածում առաջնորդվել ենք պատմական մեթոդով:

Հոդվածի գիտական նորույթը Սիմոն Սիմոնյանի ստեղծագործություններում արծարծված եղեռնի հիմնահարցերի վերհանումն է և ամբողջական համապատկերի ստեղծումը:

Բանալի բառեր՝ լիբանանահայ գրականություն, Սիմոն Սիմոնյան, ցեղասպանություն, Սփյուռք, կարոտ, ուժացում, Սասուն, գաղթ, լեռնականներ:

Սփյուռքահայ գրականության մեջ եղեռնի հիմնահարցերի արծարծումները հատկանշվում են լայն խնդրադրությամբ: Հայ մեծագույն ողբերգության ազդեցությունը մեծապես զգալի է ոչ միայն «Անապատի սերնդի»(1925-1950), այլև «Անմիջական սերնդի»(1950-1975) գրական ներշնչումների վրա, որ, ի տարբերություն առաջինի, ձգտեց կյուբի շուրջ հոգեբանական խորացումների, մղվեց դեպի պատմական իրադարձությունների հոգեբանական բացատրությունները: Սփյուռքահայ

* Հոդվածը ներկայացվել է 04.05.2019թ., գրախոսվել՝ 20.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

գրականության վերլուծաբան Մ.Թեղեղյանի դիտարկումով՝ «Անմիջական սերունդը», որ բացարձակ Սփյուռքն է, դիմագիծ ստացավ Երկրորդ աշխարհամարտից հետո և «գաղութ գաղութ եւ գզայնութեան առհաւական գիծը պահելով հանդերձ, յատկանշուեցավ ուրոյն գօտիներու գրական ազդեցութեանց ենթարկումով»⁵³¹: Այդ սերնդի մեջ գեղարվեստական մեծարժեք ձեռքբերումներով առանձնանում է լիբանանահայ թւրք, որի օժտված ու տաղանդավոր ներկայացուցիչներից է Սիմոն Սիմոնյանը:

Մ.Թեղեղյանը Սիրիայի ու Լիբանանի հայ գրական ընթացքում Ադետի թեմատիկ անդրադարձը «շոշափելի» է համարում մինչև 1930-ական թվականները, ինչը հավանաբար պայմանավորված է այն կարծրատիպային մոտեցումով, ըստ որի՝ Ադետի գրականությունը պետք է արտացոլի ջարդերի ու տեղահանությունների ողբերգական տեսարաններ, այլ խոսքով՝ պատկերի եղեռնը՝ որպես առարկայական գործողություն: Բնութագրելով 1930-1950-ական, ապա 1950-1970-ական թվականների սփյուռքահայ գրականության զարգացման ընթացքը՝ հետպատերազմյան սերնդի թեմատիկ-գաղափարական սևեռումներով՝ Թեղեղյանն առանձնացնում է շերտեր, որոնք նույնպես Եղեռնի թեմայի ծիրում պետք է դիտարկել: Դա նոր կյանքի կոչված սերունդն է (Անդրանիկ Ծառուկյան, Սիմոն Սիմոնյան, Գևորգ Աճեմյան, Արմեն Դարյան, Երվանդ Պարսումյան, Մովսես Պչագճյան, Պողոս Սևապյան և ուրիշներ), որ նույն խռովքով «Միջին Արևելքի Չայության մեջ ոտքի պահեց գաւառիկ ու տոհմաշունչ ոգին», շարունակեց կառչած մնալ հողի ու գավառի պաշտամունքին, «հայրենի կարօտանքին»՝ հատկապես արձակի ծիրում, որում ցայտուն են «թուրքին դէմ ցասումը եւ որբի հոգեբանութիւնը»⁵³²:

Եղեռնի գեղարվեստական անդրադարձների մասին խոսելիս հիմնականում դիտարկումներ արվում են հայոց կորուստների, ժողովրդի ապրած դժոխային արհավիրքի շուրջ: Յետեղեռնյան տարիներին Չայաստանում ու Սփյուռքում ձևավորված հիշողության մշակույթը նույնպես ընկալվում էր կորուստները հիշելու, սգալու, զոհերի հիշատակը խնկարկելու համատեքստում: Այդ շունչը տարածվեց նաև գեղարվեստական գրականության վրա. նույնանշանակ չափանիշների թելադրությամբ եղեռնի գրանյութին առնչվող բազմաթիվ գրական ստեղծագործություններ մնացին չնկատված և, իբրև այդպիսիք, չարժևորված: Պետականության տարիներին Եղեռնի մասին խոսելիս ավելի շատ սկսեցին անդրադառնալ XIX դարավերջի-XX դարասկզբի հայ ազատագրական շարժմանը, ցեղասպանության տարիների զինված ինքնապաշտպանական մարտերի հերոսական դրվագներին: Առանցքային շեշտադրում ստացավ եղեռնից վերապրած, օտար ափերում ապաստանած սերնդի՝ մնացորդացի կյանքի պատկերումը՝ բազում ճյուղավորումներով:

Եղեռնի իրողությունների զարկերակը՝ սկսած Չամիդյան առաջին ջարդերից, այս կամ այն չափով, այս կամ այն կողմով առկա է Սիմոնյանի ստեղծագործություններում հատկապես «Լեռնականներու վերջալոյսը» (1968) և «Սփիանայ քաջեր» (Ա հատոր՝ 1967, Բ հատոր՝ 1970) պատմվածաշարերում: Չսահմանափակվելով միայն գեղարվեստական արձակի ծիրով՝ Սիմոնյանն իր խմբագրած «Սփյուռք» շաբաթաթերթի էջերում 1958 թվականից արդեն ուշագրավ խմբագրականներ է ստորագրում հայ ժողովրդի բովանդակ պատմության ծանրագույն աղետի, դրա պատմաբաղադրական արմատների, հետևանքների, «անարդար աշխարհի», մեր «արդար ու սրբազան դատի» ու այլ կարևոր հարցերի շուրջ: «Սփիւռք»-ը միշտ «մատը դրած է այն նիւթերու վրայ, որոնց մասին արգիլուած էր խօսիլ կամ գրել»⁵³³, ուստի պատահական չէ, որ թերթը ունեցել է մոլեռանդ հակառակորդներ թե՛ Սփյուռքում, թե՛

⁵³¹ Թեղեղյան Մ., Դար մը գրականություն, հտ. Բ, Բոստոն, 1977, էջ 48:

⁵³² Նույն տեղում, էջ 53:

⁵³³ Մատենագիտություն «Սփիւռք» շաբաթաթերթի, Բեյրութ, 1984, էջ 5:

հայրենիքում: Հայրենիքի դռները Սիմոն Սիմոնյանի առաջ ուղղակիորեն փակվեցին, երբ նա 1950-60-ական թթ.-ից արդեն համարձակվեց սովետական մտակաղապարներին ոչ հարիր ազգային հարցեր բարձրացնել, որոնց թվում՝ հայկական հողերի՝ Արցախի, Նախիջևանի, Ախալքալաքի՝ հորհրդային Հայաստանին միավորելու պահանջն էր և Հայոց Եղեռնի ճանաչումն ու դատապարտումը: Հայ մամուլի պատմության մեջ «Սփյուռք»-ն առաջինը հրապարակ հանեց Եղեռնի 50-ամյա տարելիցը համազգայնորեն ոգեկոչելու պահանջը՝ առաջարկելով մշակված ծրագրեր, որոնք այսօր էլ արդիական նշանակություն ու հնչեղություն ունեն («Առաջին ապրիլի 24-ը», «Սփյուռք», 1958, թիվ 4, «Երկրորդ ապրիլի 24-ը. Ա. Ներածական և խօսք մեր բարեկամներուն», 1958, թիվ 5, «Չգաստության հրավեր – Ապրիլի 24-ի առիթով», 1959, թիվ 11, «Դեպի յիսամեակը Ապրիլեան Եղեռնի», 1968, թիվ 14-16, «Ամեն ինչ մոռնալ և յիշել մեկ բան՝ Հայկական դատը», 1964, թիվ 2, «Մարմելիքին երրորդ հարուածէն ետք... (Ապրիլեան տարանջատ խոհեր)», 1965, թիվ 16, «Հայրերը կորսնցուցին և որդիները կոչուած են փրկելու», 1968, թիվ 16 և այլն): Սիմոնյանը կոչ է անում արժանավայել կերպով տոնակատարելու Եղեռնի 50-ամյակը՝ առերեսվելով սեփական սխալների ու բացթողումների հետ. «Երկու մեծ եւ ուշագրաւ իրողութիւններ, քանդակուած ու արձանացած, կը ցցուին մեր աչքերուն առջեւ, այս գրեթէ յիսուն տարիներու ընթացքին. Ա.- ԶԱՐԴՈՒՂՈՐԸ (Հ ԱՅ Ը) Չ Է ԽՐԱՏ ՈՒ ԱԾ ԵՂԵՌՆԷՆ: Բ.- ԶԱՐԴՈՂԸ (ԹՈՒՐՔԸ) Չ Է ԴԱՐՄԱՆԱԾ ԻՐ ՈՃԻՐԸ: Ազգովին խրատուած ըլլալու համար չէր բաւեր սգալը – լաց, սեւեր հագնել, խանութներ փակել, մոմեր վառել եւ այլն - , այլ անհրաժեշտ էր համազգային ոգիով եւ իտեալով դիմագրաւել ու կանխել Ապրիլեան Եղեռններու կրկնութիւնը: Թուրքին կիսատ ձգածը մեր ձեռքով շարունակելու մեղքը գործեցինք գիտութեամբ եւ անգիտութեամբ»⁵³⁴: Սիմոնյանն իրավացիորեն նկատում է, որ հայ ժողովուրդն իր համազգային կարելիությունները չկարողացավ ծրագրված կերպով «զորակոչի ենթարկել», չկարողացավ պահանջել իր հողերը, չհետապնդեց իր դատը, հաճախ «թաղական աթոռի մը իրաւունքին պաշտպանութեան համար եղանք աւելի քաջամարտիկ, քան եղած ըլլայինք շարդողներուն դէմ»⁵³⁵: Չկարողացավ կենտրոնացված գաղութներ կազմակերպել, և սփյուռքը վերստին վերածեց սփյուռքի՝ ավելի սփռելով ու մանրացնելով: «Մեր նահատակները, Ապրիլեան զոհերը մեզմէ կպահանջեն արցունքէն ու յարգանքէն վեր ու գերազանց բան մը. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՅԱԿԵՐԺԱՑՈՒՄԸ»⁵³⁶: Սիմոնյանն ազգային խնդիրների լուծումը տեսնում էր նախ և

առաջ միասնականության մեջ: Սիմոնյանի գրեթե բոլոր պատմվածքները, նախքան ժողովածուներում ամփոփվելը, հրապարակվել են «Սփյուռք» շաբաթաթերթում 1958-1978թթ.-ին, ինչպես նաև ժամանակի այլ պարբերականներում ու տարբերքներում («Սեւան», «Բագին», «Հայրենիք» և այլն): Ստեղծագործություններ կան, որոնք տեղ չեն գտել որևէ ժողովածուում («Տալլորցի Յակոբի Յիշատարականը», «Սփյուռք», 1958, թիվ 1, «Մեր Վերջին Եղնիկը և Եղիշե Չարենց», «Սփյուռք», 1966, թիվ 10, «Որով՞ն պիտի յանձնուի լուսանկարը», 1967, թիվ 50, «Չղջում Արշակաւանի առջև», 1969, թիվ 24-25, «Աթաթիւրքի աղջկան ազգականը», 1971, թիվ 4, «Երկուորեակին եղբայրը», 1971, թիվ 7, 8, «Իր յուշարձանին այցելեց հերոսը», 1971, թիվ 14 և այլն): Դրանցից շատերում նույնպես Սիմոնյանը պատկերել է ազգային աղետի, տարագրության սոցիալական, բարոյական ու հոգեբանական հետևանքները:

Արձակուրդ հիմնակետեր ունենալով Սփյուռքի (հատկապես մերձավորարևելյան հատվածի) խնդիրները, հայրենիքի ճակատագրի սրված զգացողությունը, հայրենակարոտի հոգեսևեռուն զգայնությունները՝ Սիմոնյանը տարբեր գործերում

⁵³⁴ «Սփյուռք», 1963թ. 23 ապրիլի, թիվ 14-16 էջ 2:

⁵³⁵ Նույն տեղում, էջ 2:

⁵³⁶ Նույն տեղում, էջ 2:

պատկերել է 1890-ականներից մինչև իր կյանքի ժամանակն ընդգրկող(1970-80-ականներ) հայ ժողովրդի կյանքի գրեթե բոլոր հատկանշական եղելությունները: Սիմոնյանի ստեղծագործությամբ կարոտի գրականությունը Նոր ու ինքատիպ հավելումներ է արձանագրում: Հիմնականում պատմվածքի հղացքում գրողը խտացնում է հայրենիքից հեռու գոյատևելու դատապարտված հայության(զխավորապես՝ սամսահայության) բեկորների աստանդական ճակատագիրը, այդ ճակատագիրը կանխորոշած ողբերգությունը և, որպես այդ ողբերգության դառնագույն հետևանք, սփյուռքյան սպիտակ ջարդի եղերականությունը, որոնք էլ ամբողջացնում են Սիմոնյանի գեղարվեստական փոքր արձակի մտասևեռումների համակարգը:

«Լեռնականներու վերջալույսը» նվիրված է 1890-1915թթ.-ի ընթացքով տնտեսական ծանր պայմանների, բռնաճնշումների, ապա և բնակչության հանդեպ Օսմանյան Թուրքիայի կողմից ծրագրված ու աստիճանաբար իրագործված մասսայական տեղահանությունների ու ջարդերի հետևանքով Սասունի տարբեր շրջաններից Մերձավոր Արևելքի երկրներ գաղթած սփյուռքահայ առաջին ու հաջորդ սերունդներին: «Պատմուածքներուս այս գիրքը կարծես հեռատեսիլն է լեռնականներու դաժան խաղաղության, իրենց կյանքի վերջալույսին ու գիշերին՝ չլուսցող ու անառավոտ...»⁵³⁷, - գրում է Սիմոնյանը՝ վկայելով, որ իր հերոսները իրական անձեր են, և ինքը նրանց մասին հյուսել է «իրական պատմվածքներ»՝ «կյանքե չափ ու անկե ավելի իրական»: Նույնիսկ անուններն է պահել անփոփոխ: Սիմոնյանն Ասատուր Կյուզեյանին հասցեագրած մի նամակում վկայել է, որ պատմական հայրենիքի կարոտով ապրող սասունցիների մասին գրել է Հակոբ Օշականի խորհրդով, որ նաև խոստացել էր գրքի համար առաջաբան հեղինակել: «Քեզի կը դրկեմ Լեռնականներու վերջալույսը... Անթիլիաս, 1948-ին սկսած էի տպագրության. կը յիշե՛ս... Յակոբ Օշականի ստիպումով եւ գրելիք յառաջաբանով: 21 տարի ետք լոյս կը տեսնե...»(Պեյրուբ, 27/4/1969)⁵³⁸: Գրողն ինքը, լինելով գտարյուն սասունցի, հասակ էր առել հայրենակորույս այդ մարդկանց միջավայրում, որոնք էլ «պահանջում էին» իրենց անցած եղերական ճամփաների, կորցրած հարազատների, արևածոր կարոտների գեղարվեստական տարազավորում: «Անոնք ինձի գրել տուած են այնպես ինչպես որ իրենք ապրած են ու եղած»⁵³⁹: Պարզաբանելով իր գրական չափանիշները՝ Սիմոնյանը նշում է, որ երբեք կարիք չի զգացել դիմելու «գրական հնարքների», քանզի նրանց կյանքերը ինքնին ավելի գեղեցիկ էին, յի ու իրավ, քան որևէ տաղանդավոր վերստեղծում: «Մայրի՛կ, մայրի՛կ» վիպակում ներկայացնելով Եղսա Խանումի կյանքի սրտահույզ պատմությունը՝ Սիմոնյանը գրում է. «Թող Ատիեմանցի մայրիկը իր պատմությունը պատմե՛ ի՛ր արվեստով եւ թող Գրողը տանի գրողներուն արուեստն ու պատմելու ձևերը»⁵⁴⁰: Առարկելի ոչինչ չկա տոհմիկ լեզվամտածողությունից եկող այս ինքնահատուկ փիլիսոփայության մեջ, որն, ըստ ամենայնի, տարրալուծվում է գեղարվեստական խոսքում: Հանդարտ ու անճիգ՝ Սիմոնյանը պատմում է նրանց կյանքի «անօրինակ ու հուզիչ» պատմությունները, բացահայտում կենսական խորունկ ճշմարտություններ: Եղեռնը յուրովի է անդրադարձվել հարազատ կենսատարածքից դուրս մղված և «օտարության հորին մեջ» նետված այդ մարդկանց կենսագրություններում, ամեն մեկն ինքնովի է ապրում կորստի զգացումը, բայց բոլորի նպատակը մեկն է՝ վերադարձը:

Սասունցի լեռնականներին նվիրված պատմվածքներում (բացառությամբ մի քանիսի) չկան կոտորածի սրտաշարժ պատկերներ, սակայն դրանք աննկատելիորեն

⁵³⁷ Սիմոնյան Ս., Լեռնականներու վերջալույսը, Բեյրուբ, 1968, էջ 179:

⁵³⁸ Կյուզեյան Ա., Կը խօսին նամակները, Բեյրուբ, 2014թ., էջ 38:

⁵³⁹ Նույն տեղում, էջ 179:

⁵⁴⁰ Սիմոնյան Ս., Սիփանայ բացեր, Բեյրուբ, 1967, էջ 189:

հորդում են նրանց գրույցների, ողբերգաշունչ օրերի վերապրումների, վերապատմումների, արցունքների ու նույնիսկ՝ ծիծաղի միջից: Ճակատագրից դառնացած, երերուն, անհաշտ ու անհանգիստ այդ մարդիկ չեն հասկանում աշխարհի դրվածքը, նույնիսկ՝ հարազատ զավակներին, որոնք հեշտորեն ընտելացել են նոր միջավայրին, յուրացրել օտար կենցաղավարությունը, լեզուն և նույնիսկ կարողանում են ծիծաղել, ինչն աններելի է: Ջարդերից հետո հայն իրավունք չունի ծիծաղելու համոզված է «Սահմանային վեճ» պատմվածքի հերոս Օվեն, որ, 1915 թվականից սկսած, ամբողջ երեսուն տարի չէր ծիծաղել: «Պեղծ գործ է խնդալը, երբ կոտորված են բոլոր սիրելիները և ամայացած՝ հայրենի տունները: Հայրս չի սիրեր ոչ իր խնդացող զավակները և ոչ իսկ խնդացող որևէ Հայ: Հայերու դեմքերուն վրայ պետք է որ դրոշմվի տրտմությունը՝ որպես նշան անմոռացության»⁵⁴¹: Վսեմ հուսահատությամբ պայթար մղելով օտար բարբերի դեմ՝ համառ ու սևեռուն վարքագծով այդ մարդիկ հաճախ հայտնվում են ողբերգազավեշտական իրավիճակներում: Ապավինած «ռուսի հաղթանակի» միջոցով հայրենիք վերադառնալու ու հայրենական հողերին տեր կանգնելու պարզահավատ սպասումին՝ Օվեն ու Ավեն իրենց երբեմնի հողերն են սահմանագծում և պապենական մի հողակտոր մեկը մյուսից անարդար կերպով «խլելու» պատճառով գժտվում («Սահմանային վեճ»): Սասունցու ծռությամբ օժտված ուշագրավ բնավորություններ են քեռի Օհանը, Թոփալ Սահակը, քեռի Մակարը: Երկնային արդարության դեմ «կրակե բարկությամբ» լցված Բեռնակիր Օհանը նախընտրում է, որ սատանան շրջի աշխարհի վրա, քան «ունևորներու բարեկամ» աստվածը: Նա մշտական հակասությունների մեջ է Աստծու կողմից երկիր ուղարկված «խաֆիաների» հետ, որոնցից մեկը, Օհանի համոզմունքով, Չորավար Անդրանիկն է: Չորապետի հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքի արտահայտման միջոցով էլ բացվում է Սամա Ապաղանք գյուղում տեղի ունեցած սպանդի՝ մարդկանցով լի եկեղեցու հրկիզման պատկերը, որին Օհանի հետ ականատես է եղել Նաև Անդրանիկը: Օհանի համար հայկական սարսափելի տեղահանությունների, կոտորածների, իր նման խեղճերի զրկանքների պատասխանատուն Անդրանիկ փաշան էր, որ «մեկ ու կես ֆշանկով» (փամփուշտ) եկել և «երեք հարիւր վաթսուն տարուան Օսմանի տովվաթը» ուզում էր ազատել: Երբ Օհանին հանգստացնում են, թե Անդրանիկն արդեն մեռել է և կարիք չկա անգո մարդուն հետապնդելու, նա զայրագին պատասխանում է. «Անդրանիկ չկե՛, բայց կե՛ Անդրանիկություն»: Այսինքն՝ դեռ կա «մեկ ու կես փամփուշտով» կռվելու մոլորությունը, որն իրենց այդ օրերից ավելի վատ օրերի կարող է հասցնել, և «իր արդեն ծանր բեռն ավելի՛ ծանրացնել»:

Սիմոնյանի պատմվածքներում ծիծաղն ու տխրությունը փոխնիփոխ հաջորդում են իրար՝ ստեղծելով տրամադրությունների ուշագրավ խայտանկար: Հենց այդ առանձնահատկության շնորհիվ էլ Սիմոնյանի հերոսները ձեռք են բերում արտակարգ կենսական ռիթմեր, դառնում ինքնատիպորեն սիրելի: Նրանք գրականության մեջ տարածում գտած «փոքր մարդկանց» սիմոնյանական կերտվածքներ են: Հեղինակը սիրում է իր լեռնականներին, ցավում է նրանց համար, և իր սերը փոխանցում է ընթերցողին:

Հայոց եղեռնապատումի հուզառատ էջ է «Մուրագ մը ունըմ» պատմվածքը: Հեղինակը գրույցի է կանչում հորթուր խանեին, որ մի գեղեցիկ օր Սամա Պելավ գյուղից հարս էր գնացել խնձորիկ, երկու մանչ ունեցել և վեց տարվա հարս էր, երբ սկսվել էր կոտորածը: Խանեն շատերի հետ ու շատերի նման մանկահասակ զավակներին առել ու փախել էր սարերը: Օրեր, ամիսներ դիմադրել էր եղեռնի արհավիրքներին, թաքստոցից թաքստոց անցել, ահարկու չարչարանքներ կրելով՝ փրկության հույս փայփայել, բայց ճակատագիրը իր ու իր նման հազարավորների

⁵⁴¹ Սիմոնյան Ս., Լեռնականներու վերջալոյսը, Բեյրութ, 1968, էջ 13:

հանդեպ եղել էր անկարելիոր ու անողոք: Օսմանյան իշխանությունների հատուկ թելադրանքով գործող քուրդ բաշիբազուկները, բռնելով փախստականներին, որոնց թվում և Խանեհին՝ մանչերի հետ, փակել էին մի տան մեջ ու կրակի տվել: Խանեհին հաջողվել էր երդիկից դուրս սողալ, «իր մանչերը, սակայն, անթափանց ծուխերու մեջ մայր փնտռելով ու մղկտալով խեղդամահ եղան»⁵⁴²: Պատմվածքում հեղինակը չի խուսափում սպանդի սահմուկեցուցիչ մանրամասների նկարագրությունից, որոնք ընթերցողի առջև կենդանացնում են եղեռնյան միջավայրը: Ազգային աղետի, ողբերգության հունով գեղարվեստական պլան է թափանցում վրեժխնդրության թեմա: Հրաշքով վերապրած Խանեհն մուրազ ունի՝ «տուլժմանի» արյունը պիտի թափվի այն հողերի վրա, որտեղ զազանաբար սպանվեցին հազարավոր անմեղ մարդիկ, նաև՝ իր զավակները: Այդ արյունը միայն կարող է մարել այն ատելությունը, որ երկար դանակի պես խրված էր Խանեհի սրտում: Եղեռնը դեռ շարունակվում էր վրեժի զգացումից տակնուվրա եղած նրա եության մեջ:

Սիմոնյանն իր գրվածքներից մեկում առանձնացնում է երեք «իրականություններ», որոնք էլ կազմում են իր գործերի հոգեհատակը և ստեղծում որոշակի կենսամիջավայր: «Իրականութուն մը՝ օսմանյան բռնակալությունը, իրականություն մը՝ հայկական ճգնաժամը օսմանեան լուծին տակ, իրականութուն մը՝ հայկական ընդվզումը օսմանեան լուծին դեմ»⁵⁴³:

«Նա իր հօր զավակն է» պատմվածքում նույնպես պատկերված է ցեղասպանության արհավիրքը և ազատատենչ մաքառումը, որ մղեց սասնահայությունը առաջին(1894) ու երկրորդ (1904) ապստամբությունների ժամանակ՝ փորձելով դիմակայել չարաղետ 1915-ին, բայց ապարդյուն: Շաբաթներ շարունակ աներևակայելի խիզախությամբ կռվող Սասունն ընկավ անհավասար գոտեմարտի արդյունքում: Պատմական փաստերը վկայում են, որ թուրքական իշխանությունները Սասունի դեմ դուրս էին բերել ժամանակի ռազմական տեխնիկայով զինված հսկա բանակ, որ թվաքանակով գերազանցում էր Սասունի հայությանը: Պատմվածքում ի դեմս Մակարի ու իր հայրուկ ընկերների՝ Սիմոնյանը խտացրել է սասունցիների ապստամբ ոգին, բռնակալություն չհանդուրժող բնավորությունը: Մեղվաբուժությամբ զբաղվելու համար աշխարհ եկած սասունցին ակամա զբաղվել էր մարդու արյուն թափելով: Գյուղի տերտերը սահեցրել էր Մակարի ձեռքը փայտե այբուբենի, ապա Քերականի էջերի վրա՝ սովորեցնելով կարդալ *ծառ, սար, ոչխար, փեթակ, մարդ* բառերը... Նոր և ավելի դժվար բառերը՝ *թշնամի, պինվոր, պատերազմ, թնդանոթ, ավեր, կոտորած*, Մակարը չկարողացավ կարդալ, որովհետև ծագեց Սասունի ապստամբությունը: Յոթ տարեկան Մակարը տեսավ ու ճանաչեց թշնամուն, ահեղ պատերազմը, թնդանոթները, ավերն ու կոտորածը: Ավերվեց հայրենի գյուղը, սրի քաշվեցին յուրայինները: Այդ տարիքում արդեն Մակարը հասկացավ, որ տեսնելը ավելի դժվար է, քան կարդալը: Մի խումբ որբերի հետ նրան էլ տարան Առաքելոց վանք՝ ուսում առնելու: Բայց այնտեղ էլ «իր սորվածը չեղավ ավելի մեծ, քան իր տեսածը»: Սասնա երկրորդ ապստամբությունից հետո վերապրողների հետ Քեռի Մակարն էլ վերադարձավ գյուղ և որոշեց վերականգնել ավերակված տունն ու բարեշեն դարձնել օջախը: Նվիրվեց սիրելի գործին և արդեն մտածում էր ընտանիքի մասին, երբ ծագեց պատերազմը: Այն, ինչ Մակարի հուզումնահար աչքերը տեսան՝ «զարհուրելի հակափաստ» էին «եղբայրության իր հավատքին»: Սիրած աղջկա խոշտանգված ու անտառի տարբեր մասերում «ցիրուցան արված» մարմինը, օրեր շարունակ անկենդան մոր մարմնին փարված ու մայրական կաթի փոխարեն կրծքից դուրս թափվող որդերով մնվող մանչուկի սրտակտուր լացը, բռնաբար լլկված ու

⁵⁴² Լույս տեղում, էջ 64:

⁵⁴³ Լույս տեղում, էջ 86:

օրորոցի նման ձեռք ու ոտքով ծառի ճյուղերից կախված, հովից տարուբերվող կնոջ սահմնկեցուցիչ մարմինը և այլ զարհուրելի տեսարաններ, ի վերջո, սպանեցին իր մեջ «եղբայրության հավատքը»: ոսկե միջատներ բուծողը դարձավ մահաբույծ, ընկերավարականը՝ մարդասպան, եղբայրության հրեշտակը՝ «Ատելության սրսկիչ»: Ու այդ բոլոր հակոտնյա գծերը ներդաշնակվեցին Քեռի Մակարի մեջ: Սիմոնյանը պատումը առաջ է տանում չթուլացող լարվածությամբ, և թանձր գույներով պատկերում լեռնականների ոգեշունչ ու անհավասար պայքարը թուրք ու քուրդ բարբարոսների դեմ: Պատմական մեծ հնչեղություն ստացած Սասունի ինքնապաշտպանական կռիվները(1894, 1904) Սիմոնյանի գրչով վերածում են գեղարվեստական տպավորիչ պատկերների: Պատումը ներառում է պատմական անցքեր ու անուններ, որոնց նկատմամբ հեղինակն ունի որոշակի բաց վերաբերմունք:

Ցեղասպանության գաղափարը մեկ այլ ընդգծում ունի «Թող մեռնի երկրորդ Սահակը» պատմվածքում: Տրորված կենսագրության ողբերգական պատկեր է պարզում հեղինակը ընթերցողի առջև: Ստեղծվում է հերոսի կյանքի բովանդակային երկու հոսք՝ առաջին ու երկրորդ Սահակների հակադրության պատկերով: Սահակը երկու ծնունդ էր ունեցել՝ 1897-ին և 1915-ին: Երկրորդ Սահակին Աստված վերստեղծել էր հայ տարագրության պատկերի համաձայն, այսինքն՝ հեռու իրեն և բոլոր մարդկանց տարրական նմանությունից: Չուզահեռ պատկերվում է առաջին Սահակի կյանքի հովվերգական ընթացքը «Սասնո ամենից անմատույց ու վայրի լեռնաշրջանի մեջ, ուր վեր էր խոյանում լեռնաշխարհի ամենավեհ գագաթը»՝ Մարաթուկը: Նվիրական լեռան ստորոտում գտնվող Բիրչենք գյուղում էլ ծնվել էր Սահակը: Մարաթուկը տիրական ազդեցություն էր թողել Սահակի հոգեաշխարհի ձևավորման վրա, մտել արյան բաղադրության մեջ: Գեղեցիկ էր առաջին Սահակը, «Մարաթուք սարն ու Բիրչենք գյուղի աղջիկները կը մրցեին իրարու հետ»՝ տիրանալու համար Սահակի սրտին»: Նրա սիրտը դեռ պիտի բացվեր սիրո առաջ՝ «մեծ նուռի մը պես», բայց սկսվեց կռիվը: Գաղթի ճանապարհին Սահակը կորցրեց բոլոր հարազատներին՝ հորը, մորը, քրոջը, եղբորը: Թեև դիմացավ ու թոթափեց բոլոր հիվանդությունները, բայց դրանց խոր ու անջնջելի հետքերը մնացին մարմնին: Ահա այդպես հայ տարագրության պատկերի համաձայն Աստված ստեղծեց երկրորդ Սահակին՝ որպես կենդանի հիշատակարան, որտեղ «բանդակուած են Հայ եղեռնի ակերներն ու չարչարանքները»: Առաջին Սահակից երկրորդ Սահակի մեջ վերապրեց միայն հավատքը Մարաթուկի գործության հանդեպ: Սահակի երկրորդ կյանքը դժվարին անկույնադարձերով շարունակվեց «տարագրուած հայերի մեծ կեդրոնում» Հայեպում:

Պատմվածքներում Սիմոնյանը փորձում է վերակենդանացնել սասունցի հայի տիպարը, նրա ապրելակերպը, աշխարհայացքը, ավանդությունները և, առհասարակ, սասունցիների հավաքական հիշողությունը, պատմական ավանդը, Սասուն բնակավայրի երբեմնի հայաբույր հիշատակը: «Արուեստի գործ մը միշտ արժանի է ակելի յարգանքի, երբ փշուր մը բան կը փրկե այդ ամենէն»⁵⁴⁴, -գրում է Հակոբ Օշականը: «Լեռնականներու վերջալույսը» ժողովածուն սասունցու յուրահատուկ ինքնության, պապենական հայրենաշունչ խառնվածքի կենդանագիր է:

Թուրքի ձեռքով հայ ժողովրդի հոգում բացված վերքերն անդրադարձնող էջեր կան Սիմոնյանի «Սիփանայ քաջեր» ժողովածուում: Հայ-թրդական ավանդության համաձայն՝ Սիփան լեռան գագաթին ապրում է ֆալաքը՝ ճակատագիրը: «Ֆալաքին անարդարություններուն դեմ կռուելու կոչուած են Սիփանայ քաջերը: Այս հատորի բոլոր գրություններուն հերոսները կը կռուին ֆալաքի դեմ, որ անարդար եղաւ Հայոց հանդեպ: Ուստի այս գիրքին խորագիրը կրնար կոչուիլ Սիփանայ քաջերը»: Գրքի խորագրի հեղինակային «ստուգաբանությունը» ընթերցողին անմիջականորեն

⁵⁴⁴ **Օշական Հ.**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հտ. 7, Անթիլիաս, 1979, էջ 217:

կապում է եղեռնյան իրողության հետ, ինչն էլ գրքի էջերում ցույցանում է պատմական անարդարությունների դեմ ընդվզման, դրանց դատապարտման գաղափարական շեշտադրումներով: «Սիփանայ քաջեր»-ում Սիմոնյանը յուրացնում է կենսական ավելի խոր շերտեր, լայնացնում է նյութի շրջանակը՝ անդրադառնալով այնպիսի թեմաների, ինչպիսիք են՝ հայրենադարձությունը, ծուլման, ուժացման, այլ խոսքով՝ սփյուռքում սպիտակ եղեռնի դեմ պայքարի ուղիների որոնումը, սերունդների փոխհարաբերությունները:

Սիմոնյանի հերոսները ֆալաթի դեմ կռվում են ոչ թե զենքով, այլ հիշողությամբ, հայրենի հիշատակներով, ասել է թե՛ հոգևոր հայրենիքի գաղափարով, ինչը լավագույն միջոցն է՝ նորահաս սերնդին անմասն պահելու ծուլման վտանգից: «Սիփանայ քաջերը» հիշողության վրեժ է ֆալաթի դեմ, որ անարդար եղավ հայ ժողովրդի հանդեպ: Ուշագրավ է, որ գրքում ֆալաթի խորհրդապատկերը նույնացվում է թուրք տարրի հետ. «Հայոց ազգը անտառ էր, Թիւրքը ճղակոտոր ծա՛ռ դարձուց զանի...: Թի՞ւրքը թե ֆալաթը(ճակատագիրը) կրա՛կ ձգեց. Ատի չեմ գիտեր...»⁵⁴⁵: Կամ «Ֆալաթը ինչու՞ մեզ դեպի Տեր-Չորի չլուրը նետեց... Եհիշտ է, Հայոց ազգը չձգեց, որ Ֆալաթը մեր գլխուն բերէ իր բուրձը ու զաճները... Բայց ու՞ր են Ֆալաթին դեմ կռուող Հայոց կտրիճները...»⁵⁴⁶: Արձագանքելով աշխարհում տեղի ունեցող անարդարություններին՝ Սիմոնյանը բացում է ազգի հին վերքերն ու նոր ցավերը:

Տարագրության մեջ հայրենի հիշատակներով ապրող մարդ է սափրիչ Սարգիսը՝ «Սափրիչ Սարգիս, Ներգաղթ և ածելի» պատմվածքի հերոսը, որ խանդավառությամբ սպասում էր հայրենիք ներգաղթելու երանելի օրվան: Սակայն նա ենթադրել էր կարող, որ երեք որդիներից երկուսը կտրականապես կիրաժարվեն մեկնել ու բնակություն հաստատել հայրենիքում: Դա անօրինակ ողբերգություն էր Սարգիսի համար, տարագիր հայության շրջանում տարեցտարի հոգեզգացական մեծ տարածքներ նվաճող ողբերգություն, որով բնութագրվում է մի ամբողջ ժամանակաշրջան, մտայնություն ու հոգեխառնություն: Աշխարհասփյուռ հայ գաղթաշխարհում հետզհետե արմատավորվող տեղայնացման, ծուլման երևույթով աղավաղվում ու վտանգվում էր հայի իսկական տեսակի, ինքնության՝ սերնդեսերունդ փոխանցվող նկարագիրը:

Այսպես, իր ստեղծագործության այս կամ այն շերտում Սիմոնյանը խտացնում է 20-րդ դարասկզբի հայ ժողովրդի ապրած դառնագույն ողբերգությունը, որ ճյուղավորվում է աշխարհի բոլոր ցամաքամասերում: Եղեռնը շարունակվում է խեղված ճակատագրերի, որք ու անտեր ընտանիքների, աշխարհում սիմված հայի բեկորների մեջ, որոնք օտար ափերում հոգեկան հենակետեր են որոնում, բայց այդպես էլ չեն ամրանում: Շատերը հեռանում են հայրենի բարքերից, մոռանում անցյալն ու պատմությունը, ազգային խորհրդանիշները և, ի վերջո, դադարում հայ լինելուց: Սիմոնյանը սուր կետի վրա է դնում հայության դիմագծին սպառնացող սոսկահար տագնապներից մեկը՝ ուժացումը, որ յուրովի է արտացոլել հատկապես «Մայրի՛կ, մայրի՛կ» վիպակում: Հեղինակը պատկերում է ժամանակի ծանր հոգեբանական երևույթներից մեկը՝ հին ու նոր սերունդների օտարումը: Պատմվածքի հերոսներից Ջեթը՝ ավագանի անունով Հակոբը, մոր՝ Հաճի Եղսայի հինգ զավակներից միակն էր, որին գաղթի ճանապարհին կարողացել էր փրկել ու հասցնել Հայեա: Անասելի չարչարանքներ կրելով՝ Եղսան աճեցրել էր հոր գերդաստանից մնացած միակ հունդը և ապա ուղարկել Ամերիկա, որ «ամրանայ ու տարածուի կաղնի ծառին պես, որ Հայոց մեռնող անթառամ ու պայծառ մայր ի՛ր, իր կնոջ ու իր զավակներու ճակատներուն»⁵⁴⁷: Հետո հասկացել էր, որ սխալ է վարվել, բայց արդեն ուշ էր, ինչպես ինքն է ասում, որդուն «ազատել էր տաճկի ձեռքից, բայց հանձնել նրանից ավելի գեշ բանի մը ձեռքը»:

⁵⁴⁵ Սիմոնյան Ս., Սիփանայ քաջեր, գիրք 1, Բեյրութ, 1967, էջ 208:

⁵⁴⁶ Նույն տեղում, էջ 222:

⁵⁴⁷ Նույն տեղում, էջ 208:

«Ես տեսա երկու Տեր-Չորներ՝ իմ մե՛կ աչքովս», - ասում է Եղսա մայրիկը՝ ութ ամիս Ամերիկայում որդու տանն ապրելուց հետո՝ «101 տարուան բանտարկյալի պես»: Երկրորդ Դեր-Չորը Ամերիկյան է՝ ավելի զարհուրելի, քան առաջինը, քանզի «Տեր-Չորի չուր ինկող մեր ազգակիցները կրնան վերադառնալ Հայոց Տուն, բայց Ամերիկյա ինկող մեր գաւակները պիտի չվերադառնան»⁵⁴⁸: Պատմելով իր մասին, Ներկայացնելով Նախ՝ զաղթի ճանապարհին, ապա՝ Ամերիկայում գիտով անցածը՝ Եղսան արտահայտում է ոչ միայն իր, այլև մի ամբողջ սերնդի ազգային մտահոգությունները: «Պատմե, մայրի՛կ, պատմե՛, ինչպէս մեր երգը կ'ըսե՛ «Կանչե՛, կռունկ, կանչե՛»⁵⁴⁹: Որդու տանը Եղսային սպասում էին բարոյական ցնցումներ՝ մեկը մյուսից զորավոր. Նախ՝ տանում են ճաշարանում աշխատեցնելու, ապա՝ ավելորդ տհաճություն չպատճառելու համար (քանի-որ նա միակնակի էր ու հայերեն էր խոսում) արգելում են երևալ հաճախորդների աչքին. «Եթե մայրդ վար իջնէ, հաճախորդները կը փախին», - հարսի պահանջն էր: Ապա ծրագրում են պարտքի դիմաց ամուսնացնել Եղսային մեծահարուստ ու տարեց մի ամերիկացու հետ: Եղսայի տառապանքն ավելի է խորանում, երբ արժանանում է թոռների անբարյացակամ վերաբերմունքին, Նրան հրամայվում է փակված մտալ սենյակում բոլոր այն օրերին, երբ թոռան «բոյ-ֆրենդն» էր հյուր գալիս. տատի եղեռնագարկ տեսքը ակնահաճո չէր քաղաքակրթված ու փափկակենցաղ երիտասարդին: Հեղինակը դեպքերի զարգացումը հասցնում է վերջնագծին. որդին ու հարսը որոշում են մորն ուղարկել Հալեպ, քանզի Նրա հետ կապված շահախնդրական ծրագրերը գլուխ չեն գալիս ու այլևս ավելորդ ծախս էր Ամերիկայում պահելը: Դրանից հետո արդեն սկիզբ է առնում բարոյական մահը: Հակորթի հոգեբանական խզումը ազգայինից, իր անցյալից, պատմությունից, Նույնիսկ իրեն թուրքի յաթաղանից փրկած տարաբախտ մորից, վերջնական է:

Սիմոնյանի ստեղծագործությանն ուրույն երանգ է ավելացնում հայ-թուրք հարաբերությունների թեման: Այդ առումով ուշագրավ են «Դեպի Էրզրում. Թուրք զնդապետի մը հետ» և «Աթաթուրքին աղջիկը» պատմվածքները: Հերոսներից մեկի հետևությունը, թե պատմական հանգամանքների բերումով «շատ հայեր թրքացել են և շատ թուրքեր՝ հայացել», հեղինակի համար հայեցակարգային առանցք է, որն ամբողջական դարձնելու համար դիմում է բազմաթիվ իրական փաստերի ու գեղարվեստական հղացման տարբեր սկզբունքների: Առաջին պատմվածքում դեպքերը զարգանում են գրեթե արկածային ընթացքով՝ հայ պատմաբանն ու գերմանացի նշանավոր գանգաբանը մասնագիտական ուսումնասիրությունների նպատակով ուղևորվում են Էրզրում: Գանգեր չափագրելու ու դրանց տեսակները որոշելու մոտիվն ինքնին հետաքրքրաշարժ է դաձնում պատումը և հնարավորություն տալիս բացահայտելու Նոր տիպարներ, հաղորդակցվելու հեղինակի Նոր մտահոգություններին: Գերմանացի գանգաբանի՝ Թուրքիայի տարածքում կատարած գանգաբանական չափագրություններն ու հետազոտությունները բերում են Նրան պարականոն եզրակացության, ըստ որի՝ հայերը «չեն տարագրվել Թուրքիայից, այսինքն՝ հայկական նահանգներից... Նրանք ապրում են այդ սրբազան ու վաղեմի հողերի վրա»⁵⁵⁰: Եզրակացությունը խորապես ցնցում է հայ պատմաբանին, որ հրաժարվում է հավատալ գանգաբանական այդ տեսությանը: Գիտնականի մեկնակետը *արմենիդ* տիպի գանգն էր, ըստ որի փորձում էր զատորոշել Փոքր Ասիայի, Կովկասի ու Միջագետքի ժողովուրդների գանգերը՝ հայկականի հետ ունեցած տարբերություններով ու նմանություններով: Որպես նմուշ ծառայած բազմաթիվ թուրքերի գլխում նա հայտնաբերել էր նկատելի գերակշռությամբ *արմենիդ* տեսակի գանգեր և պատրաստվում էր Երզնկայում ու Էրզրումում հետազոտություններն

⁵⁴⁸ Նույն տեղում, էջ 209:

⁵⁴⁹ Նույն տեղում, էջ 190:

⁵⁵⁰ **Սիմոնյան Ս.**, Սիփանայ քաջեր, գիրք 2, Բեյրութ, 1970, էջ 13:

ավարտեց հետո ամբողջացնել իր գիտական եզրակացությունները: Այդ առանցքի շուրջ էլ հյուսվում է «Թուրք գնդապետի մը հետ» պատմվածքի դիպաշարը, որի հիմքում լայն իմաստով թուրքի հոգեբանական վերլուծությունն է: Մինչև վերջին անկյունը բացվում է հայ ընտանիքից սերված, այդ բարոյությունից ամբողջ կյանքում տառապող մոլեռանդ, հայատյաց թուրք գնդապետի ետությունը, որին իր կենսըմբռնումներով զուգահեռվում-հակադրվում է մեկ ուրիշը՝ գանգի *արմենիդ* տեսակով լիակատար մի թուրք, որը չի տառապում այդ բարոյությունից, ավելին՝ կյանքի իր փիլիսոփայությամբ լավագույնս պատճառաբանելով հայ-թուրք հարաբերություններում առկա բազմաթիվ հոգեբանական թնջուկներ՝ տալիս է դրանց ինքնօրինակ գնահատականը: Եվ որքան ընդարձակվում ու ծավալվում է երկմակարդակ գրույցը, այնքան ընդգծվում, ինքնատիպ ուղղվածություն ու ողբերգական շեշտվածություն է ձեռք բերում առաջին թուրքի կերպարը, որ 1915-ին մի թուրք կնոջ կողմից փրկված գտարյուն հայ էր՝ ի հակակշիռ իր *այթայթ* տեսակի գանգի: Նա երբևէ խուսափել էր հոգու ծայքերը բացել, որովհետև հանկարծ կարող էր խելացնորվել իրողության ծանրությունից: Որքան խորանում ենք այդ կերպարի եության մեջ, որքան ջանում ենք հասկանալ նրան, այնքան բացահայտում ենք ողբերգական մի անհատի, որի դժբախտությունն իր ուրույն դրդապատճառներն ունի: Արձակագիրն ասես ստեղծել է երկպատկեր՝ իրար հակադրելով նույնածին, բայց տարբեր ընթացքներ ունեցող նկարագրեր: Մեկը պատրաստ է եղել հոգեբանորեն ընդունելու իրողությունը՝ կյանքի ամեն քայլափոխի զգալով ճշմարտության շնչառությունը, մինչդեռ մյուսն իրեն կամովին զնդանել է կեղծ անգիտության մեջ, «մեռցրել իր մեջ ճշմարտության ձայնը», որովհետև այդ ճշմարտությունը չունեն ընդհանուր եզրեր իր կյանքի ու պարտականությունների հետ: Երկուսի ողբերգության հիմքում էլ ընկած է ցեղասպանության դառնադի փաստը, հայերին բռնի ձուլելու, մանկահասակ տարիքից արյան հունը փոխելու, թրթաղելու զարհուրելի երևույթներով. պատմական անարդարություններ, որոնք վեր է հանում հեղինակը և դրանց շուրջ մտորել տալիս:

«Աթաթուրքին աղջիկը» պատմվածքի հիմքում թուրք առաջին կին ռազմական օդաչու, թուրքական կանացիության կատարելատիպ ու ազգային վեհության խորհրդանիշ համարվող Սաբիհա Գյուլչենի հայկական ծագման աղմկահարույց պատմությունն է: Նրան Ջիբրիլ մանկատնից 1925 թվականին որդեգրել էր Թուրքիայի առաջին նախագահ Մուստաֆա Զեմալ Աթաթուրքը, քանի որ ցեղասպանությունից հետո հազարավոր ծնողազուրկ երեխաներ, որոնց թվում և Խաթուն Սեբիջյանը՝ Տիրուհի ու Ներսես Սեբիջյանների դուստրը, հայտնվել էին որբանոցներում: Աթաթուրքը երկնագույն աչքերով իր հոգեզավակին Սաբիհա անունն էր տվել ու կնքել Գյուլչեն (թուրքերեն՝ երկնային) ազգանունով: Աթաթուրքն առանձնապես չէր կարևորում, թե իր հոգեզավակների երակներում ինչ արյուն է հոսում, կարևորն այն էր, որ նրանք դաստիարակվում էին թուրքական ոգով: Սաբիհայի հայկական ծագումը երկար ժամանակ հայտնի էր հայերի շրջանում: Առաջին անդրադարձը հայուհու անօրինակ ճակատագրին եղավ Սիմոնյանի գրչով՝ 1970 թվականին, երբ «Սփյուռք» շաբաթաթերթի օգոստոսի 16-ի թիվ 33 համարում տպագրվեց «Աթաթուրքին աղջիկը» պատմվածքը՝ ընծայագրված՝ «Տերսիմացի բարեկամիս» Գեորգ Երեւանեանին»: Պատմվածքը հետագայում զետեղվեց «Սիփանայ քաջեր» ժողովածուում (1970), ինչպես նաև «Լեռ եւ ճակատագիր» (1972) հատընտիրում: Պատմվածքում առաջին անգամ Սիմոնյանը խոսեց Գյուլչենի հայկական արմատների, իսկական անվան, եղբունին զոհ դարձած ընտանիքի մասին՝ զեղարվեստական տպավորիչ պատկերներով ներկայացնելով մոր տեսլացումից առաջ եկած հոգեկան ծանր տագնապը, որ ապրում է թրթաքած հայուհին Դերսիմի ռմբակոծումից առաջ: Գյուլչենի պատմությունը հայերի համար մի ողբերգական դրվագով էլ է հայտնի: 1938թ.-ին Նա Աթաթուրքի հրահանգով մասնակցել էր Դերսիմի կոտորածին՝ ռմբակոծելով ցեղասպանությունից փրկված և Դերսիմում ապաստանած հայերին: Թուրքական

«Yeni Akit» պարբերականը ներկայացրել էր Սաբիհա Գյոլչենի՝ ժամանակի հայտնի թերթերից մեկին՝ «Tan»-ին տված տխրահուշակ հարցազրույցը, որում Աթաթուրքի հոգեգավակը, 1915-ի ցեղասպանությունից փրկված հայուհին՝ Լույն ինքը խաթուն Սեբիջյանը, պատմել էր, թե ինչպիսի խանդավառությամբ է մասնակցել Դերսիմի կոտորածին: Սիմոնյանը Գյոլչենի ռազմական այդ չարաղետ թռիչքն էլ դարձնում է պատմվածքի ատաղձը՝ նկարագրելով նախքան զարհուրելի հրահանգն ի կատար ածելը հայուհու ապրած սոսկալի մտատանջանքը, որի պատճառը գիշերվա երազն էր, «երկնային սուրացող միևնույնության» մեջ ակաջին հասած մոր սաստող ձայնը՝ «խաթուն...», և ռազմական օդանավի պատուհանից իր աչքերին տխրորեն փարվող հարազատ վայրերը, որտեղ անցել էր պիստակենիների բույրով լեցուն իր մանկությունը...

Հայտնի է, որ Թուրքիայում Սաբիհա-խաթունի գաղտնիքը «բացահայտեց» Հրանտ Դինքը: 2004 թվականին «Ակոս» թերթում տպագրվեց Դինքի հարցազրույցը հայաստանաբնակ Հռիփսիմե Սեբիջյանի հետ: Վերջինս պնդում էր, որ Սաբիհա Գյոլչեն իր հարազատ մորաքույրն է՝ ներկայացնելով իր մոր՝ Տիրուհու կյանքի պատմությունը: Տիրուհու ծնողները Այնթապի Չիբին գյուղից էին, զոհվել էին ջարդերի ժամանակ: Ծնողների մահից հետո նրանց անչափահաս աղջիկները՝ Տիրուհին ու խաթունը, հայտնվել էին թուրքական որբանոցում, որտեղից էլ խաթունին որդեգրել էր Աթաթուրքը: 1946թ.-ին Տիրուհին Սիրիայից ներգաղթել էր Խորհրդային Հայաստան: Նա շարունակ փորձել էր կապ հաստատել քրոջ հետ, սակայն ապարդյուն: Հրանտ Դինքը «Սաբիհա Գյոլչենի գաղտնիքը» հողվածում, որպես հայկականության ևս մեկ իրեղեն ապացույց, մատնանշում էր նաև այն փաստը, որ Սաբիհան տառապել է «երևանյան» կամ «հայկական» կոչված հիվանդությամբ, որի մասին պատմվածքում վկայակոչել է նաև Սիմոնյանը: «Սփյուռք» շաբաթաթերթի 1971թ.-ի թիվ 4 համարում Սիմոնյանը հրապարակեց նաև «Աթաթուրքի աղջկան ազգականը» կարճ ու հուզիչ պատմվածքը, որն իրական դեպքի հիմքով շարունակում էր Աթաթուրքի աղջկա պատմությունը: Հալեպից հեղինակին է այցելում Ներսես անուևով մի գաղթական հայ և պնդում, որ ինքը Սաբիհա Գյոլչենի՝ Լույն խաթուն Սեբիջյանի հորաքրոջ տղան է, և «Սփյուռք»-ում հրապարակված պատմվածքը տակնուվրա է արել իր զգացմունքները: Թրքացած քրոջը տարիների հեռվից հանդիպելու որոշումը դառն հարցեր է առաջ բերում. արդյո՞ք խաթունը կընդունի սիրասուն եղբորը. «... թրթուրեամբ փառքի հասած է, ... հայուրեամբ պիտի գլտորի, չեմ գիտեր մինչեւ ուր... Մինչեւ հիմա ծածկած է իր հայ ըլլալը, ասկե անդին պիտի չուզե յայտնել, եւ շատ հաւանաբար մերժե...»⁵⁵¹: Հայոց ցեղասպանության ընթացքում առևանգված կամ ծնողների սպանողից հետո փրկված հայ երեխաների ճակատագրերը առանձին և լուրջ ուսումնասիրության կյուբ են: Հայտնի է, որ տխրահուշակ թուրք զորավար Քարաբեքիրը, արևելյան ճակատում հավաքելով որբ, անտուն, անխնամ հայ երեխաներին, նրանց տալիս էր ռազմական կրթություն և դաստիարակում մոլի «թուրքականության» ոգով: Հենց այդ երեխաներից է հետագայում կազմավորվում, այսպես կոչված, «Երեխաների բանակ» ռազմական միավորումը: Թուրքական միջավայրում մեծացած ու դաստիարակված այդ երեխաները հետագայում դառնում էին ամենամոլի ու դաժան զինվորները՝ այդպես էլ չիմանալով իրենց իսկական ծագումը: Երևույթի ողբերգականությունը խորապես մտահոգել է ցեղասպանության թեմային այս կամ այն կերպ անդրադարձած գրողներին, նաև՝ Սիմոն Սիմոնյանին: Հայերի հանդեպ թուրքական ոճրագործությունները ամբողջական մոտիվ են ձևավորում նաև Սիմոնյանի «Երեք օրակարգեր», «20000 Էն Մեկը...», «Խմբապետ Ղազարի դատավարությունը» և այլ պատմվածքներում:

⁵⁵¹ «Սփյուռք», 1971թ., թիվ 4, էջ 2:

Ամփոփենք անդրադառնալով Եղեռնի դառն իրողություններին՝ Սիմոնյանն իր ստեղծագործություններում վեր հանեց հիմնականում սասնահայության՝ օտար միջավայրում ինքնանալու, ամրանալու անհնարինության գաղափարը, հայրենակարոտի տառապանքը, բնօրրանի ու հարազատների կորստի ցավը, արդար հատուցման ու վրիժառության փափագը, ուժացման վտանգն ու դրա աղետալի հետևանքները, այն անօրինակ ճիգը, որով եղեռնագարկ մարդիկ փորձում էին դիմադարձվել օտար կենսավարությանը և, ի վերջո, տունդարձի լուսավոր հավատը, որ ապրեցնում և ուժ էր տալիս հայրենաբաղձ լեռնականներին:

SOME ISSUES ON THE GENOCIDE IN THE WORKS BY SIMON SIMONYAN

TEHMINA MARUTYAN

*Member of the Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA),
Deputy Editor-in-Chief of the Journal «Scientific Artsakh»,
Scientific Secretary of Goris State University, Head of the Chair of Armenian language
and literature of GSU, Ph.D in Philology, Associate Professor,
Goris, Republic of Armenia*

There are no separate studies of the works of the famous Lebanese prose writer of Armenian origin Simon Simonyan in the Armenian literature. The topic of genocide revealed in the works of the writer was not discussed either. The relevance of this article is the systemization and evaluation of the theme of genocide in the works of S. Simonyan. Our goal is to show the role and importance of creativity S. Simonyan, literary, historical and actual value with the main features, thematic layers, the main features of the world in the context of Armenian literature. Mainly in his stories and novels, the writer reflected the wandering fate of the fragments of the Armenian people doomed to live far from their homeland (the Armenians of Sasun), a national tragedy that predetermined such a fate and formed a specific psychological state with a keen sense of homesickness, pain from losses and, finally, as a bitter consequence of this, the tragedy of the white genocide of the Diaspora, which runs like a red thread in S. Simonyan's prose. In the article we have been guided by the historical method.

The scientific novelty of the article lies in the disclosure of the main problems of genocide raised in the works of Simonyan, the creation of a holistic panorama.

Key words: Lebanese-Armenian literature, Simon Simonyan, genocide, Diaspora, longing, Sasun, alienation, migration, highlanders.

ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ПРОИЗВЕДЕНИЯХ СИМОНА СИМОНЯНА

ТЕЙМИНА МАРУТЯН

*Член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),
заместитель главного редактора журнала «Научный Арцах»,
ученый секретарь Горисского государственного университета,
заведующий кафедрой армянского языка и литературы ГГУ,
кандидат филологических наук, доцент,
г.Горис, Республика Армения*

В армянской литературе нет каких-либо отдельных исследований творчества знаменитого ливанского прозаика армянского происхождения Симона Симоняна. Не послужила предметом обсуждения также тема геноцида, раскрытая в произведениях писателя. Актуальность данной статьи заключается в систематизации и оценке представленной темы геноцида в творчестве С.Симоняна. Нашей целью было показать в контексте армянской литературы в основных чертах, по тематическим прослойкам, по главным особенностям мировоззрения, роль и значение творчества С.Симоняна, его литературно - историческую и актуальную ценность. Главным образом в своих рассказах и повестях писатель отобразил скитальческую судьбу осколков армянского народа, обреченных жить вдали от родины (армяне Сасуна), национальную трагедию, которая предрешила такую судьбу и сформировала конкретное психологическое состояние с острым чувством тоски по родине, болью от потерь и, наконец, как горьчайшее следствие этого, трагичность белого геноцида диаспоры, что красной нитью проходит в прозе С.Симоняна.

В статье мы придерживались исторического метода.

Научная новизна статьи заключается в раскрытии основных проблем геноцида, поднятых в произведениях Симоняна, создании целостной панорамы.

Ключевые слова: ливано-армянская литература, Симон Симонян, геноцид, диаспора, тоска, Сасун, отчуждение, миграция, горцы.